



ՍԵՂՐԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ապետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ»

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԼԱՎԱՐԿՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի բարեփոխումները ինքնանպատակ չեն: Հաշվի առնելով փոփոխությունների կառավարման գործընթացում շահադրված կողմերի դիմադրության հաղթահարման հսկայական դժվարությունները՝ պարզ է դառնում, որ պետական կառավարման մակարդակում գործառույթային բարեփոխումների իրականացումը հղի է անկանխատեսելի հետևանքներով՝ պայմանավորված ինչպես տնտեսաքաղաքական և սոցիալական ցնցումների հավանականությամբ, այնպես էլ գործադիր իշխանության կառավարման կազմակերպական կառուցվածքի արմատական փոփոխություններով և դրա կազմի մեջ մտնող ճյուղային և գործառութային նախարարությունների քանակի և հարաբերակցության կտրուկ փոփոխություններով:

21-րդ դարի նախաշեմին աշխարհի տարբեր երկրներում իրագործվեցին պետական կառավարման բարեփոխումների խոշորածավալ և համալիր ծրագրեր՝ ուղղված գործադիր իշխանության գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Բարեփոխումների մի մասը կրեց արմատական բնույթ (կառավարության կառավարման կազմակերպական կառուցվածքը ենթարկվեց էական փոփոխությունների ու զգալի տեղաշարժերի, կառավարման մեթոդներն ու համակարգերը հիմնովին փոփոխվեցին՝ հանգեցնելով «նոր պետական կառավարում» եզրույթի առաջացմանը):

Հիմնարարներ. *կառավարման կազմակերպական կառուցվածք, գործառնության բարեփոխումներ, պետական ծախսեր, ճյուղային և ֆունկցիոնալ նախարարություններ*

JEL: M1, M38, H11

ՀՀ-ում 2018 թ. թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո սկսվեց պետական կառավարման համակարգի գործառնության բարեփոխումների բուռն ժամանակաշրջանը, որը շարունակվում է առ այսօր:

Ընդհանուր առմամբ, կարող ենք առանձնացնել կարճաժամկետ ընթացիկ փոփոխությունների ենթակա ՀՀ պետական կառավարման համակարգի հաստատութենական կառուցակարգերի 4 հիմնարար ոլորտներ.

1. Պետական ծախսերի կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացում
2. Կադրերի և պետական քաղաքացիական ծառայության կառավարում
3. Գործադիր իշխանության կառավարման կազմակերպական կառուցվածքը
4. Պետական կառավարման համակարգի դերն ու նշանակությունը պետական քաղաքականության հետագա զարգացման և իրագործման ոլորտում:

Թեև 2016 թ. ՀՀ Կառավարությունը հաստատեց պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016–2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագիրը, որի հիմնական նպատակն է ապահովել պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը՝ բարձրացնելով ընթացակարգերի ու մատուցվող ծառայությունների որակը, այդուհանդերձ, սույն փաստաթուղթը լրացուցիչ վերանայման ու հիմնավորման կարիք ունի: Թեև ՀՀ նախկին Կառավարությունը «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների (ՊՖԿՀԲ) վերանայված ռազմավարության» իրականացման արդյունքում պետական ծախսերի կառավարման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանձն էր առել որոշակի փոփոխությունների կատարում, ընդ որում՝ առաջարկվող փոփոխությունների արդյունքում պետք է ապահովվեր պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ-PEFA) 2016 թ. շրջանակի կատարողականի ցուցանիշների գնահատման չափանիշների պահանջներին համապատասխան ՊՖԿՀԲ գործընթացներն ապահովող ոլորտների միջոցառումների՝ սահմանված ժամկետներում իրականացումը¹, սակայն գործընթացը հաջողված չի կարելի համարել, որի պատճառով ՀՀ ներկայիս Կառավարությունը մեկ անգամ ևս վերանայում է պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016–2020 թթ. իրականացվելիք գործողությունների ծրագիրը:

Կադրերի և պետական քաղաքացիական ծառայության կառավարման երկրորդ հիմնարար ոլորտը, թերևս, ամենահիվանդագին և ցավոտ հարցերից է՝ հատկապես ներկա ժամանակահատվածում:

¹ Տե՛ս <https://armenpress.am/arm/news/836342/hayastanum-cankanum-en-bardzracnel-petakan-tsakhseri-karavarman.html>

ՀՀ պետական կառավարման համակարգի կադրային քաղաքականության առանցքային ուղղությունը երիտասարդ կադրերի ներգրավվածության աստիճանի բարձրացումն ու երիտասարդ կադրերով պետական կառավարման համակարգի թարմացումն է: Խոսքը վերաբերում է նախևառաջ արտասահմանյան բուհերում ուսումնառած, օտար լեզուների գերազանց իմացությամբ կադրերին՝ լի ստեղծագործական գաղափարներով և իրենց ունակությունների դրսևորման անսպառ եռանդով: Թերևս, պետական կառավարման համակարգը վաղուց էր զգում հեղափոխական հայացքներով օժտված երիտասարդ ներուժի պահանջ: Այդուհանդերձ, այս գործընթացը ևս զերծ չէ թերություններից, իսկ ամենագլխավոր թերությունը երիտասարդ կադրերի փորձի և գործնական ունակությունների պակասն է: Պետական ապարատի կադրային թարմացումը պետք է իրականացվեր ոչ թե «շոկային թերապիայի» մեթոդով, այլ աստիճանաբար, որոշակի փուլերով և ընթացակարգերով՝ հաջորդական փոխատեղման սկզբունքին համապատասխան:

Շուկայական տնտեսության ժամանակակից պայմաններում ինչպես ցանկացած առևտրային կազմակերպության, այնպես էլ գործադիր իշխանության՝ Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը կառավարման օպտիմալ կազմակերպական կառուցվածքի ձևավորումն է, որից անմիջականորեն կախված է առաջադրված նպատակների և խնդիրների իրագործումը:

Կառավարման այս կամ այն կազմակերպական կառուցվածքի ընտրությունը, ըստ որոշակի ներքին և արտաքին գործոնների, ինստիտուցիոնալ մակարդակի ղեկավարության կարևորագույն խնդիրներից մեկն է, ինչն էլ կանխասահմանում է Կառավարության գործունեության հիմնարար ուղղությունները և հանդես է գալիս որպես հաջողությունների գրավական:

Ինչպես վկայում են 20-րդ դարի վերջին աշխարհի երկրների մեծ մասում իրականացված պետական կառավարման համակարգի կազմակերպական կառուցվածքի գործառույթային բարեփոխումների դրական արդյունքները՝ բոլոր համընդգրկուն բարեփոխումներն իրականացվել են նախարարությունների, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների, խորհուրդների և միջկառավարական հանձնաժողովների կառուցվածքի ոլորացմամբ, կրճատմամբ և համախմբման սկզբունքով:

Մինչև 2018 թ. երկրորդ կեսը, ՀՀ-ում գործադիր իշխանության մարմինները հանդես են եկել ճյուղային ներքոհիշյալ նախարարությունների տեսքով.

Ճյուղային նախարարություններ

1. Առողջապահության՝ 2000 թ.՝ առողջապահության և սոցիալական ապահովության նախարարություն,

2. Բնապահպանության՝ 1996-ից, 1995–1996 թթ.՝ բնապահպանության և ընդերքի, 1994–1995 թթ.՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության, 1991–1994 թթ.՝ բնապահպանության և շրջակա միջավայրի նախարարություն,

3. Գյուղատնտեսության՝ 1991–1994 թթ. և 1996-ից, 2000 թ.՝ գյուղատնտեսության և բնօգտագործման, 1995–1996 թթ.՝ գյուղատնտեսության և պարենի, 1993–1995 թթ.՝ պարենի և մթերումների, 1990–1993 թթ.՝ հացամթերքների նախարարություն:

4. Էներգետիկայի և բնական պաշարների` 2007-ից, 1995–2007 թթ.` Էներգետիկայի, 1992–1995 թթ.` Էներգետիկայի և վառելիքի նախարարություն:

5. Կրթության և գիտության` 1995-ից, 1991–1995 թթ.` բարձրագույն կրթության և գիտության, 1990–1991 թթ.` բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտե, 1990 թ.` լուսավորության նախարարություն:

6. Մշակույթի` 1995 թ. ՀՀ մշակույթի նախարարությունը վերանվանվել է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության: 2003 թ. ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը վերանվանվել է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության: 2007 թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը կրկին վերանվանվել է ՀՀ մշակույթի նախարարության:

7. Սպորտի և երիտասարդության հարցերի` 2008–2018 թթ.:

8. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների` 2000-ից, 1996–2000 թթ.` տրանսպորտի, 1998–2000 թ.` փոստի և հեռահաղորդակցության, 1991–1996 թթ.` տրանսպորտի և հեռահաղորդակցության, 1991–1998 թթ.` կապի նախարարություն: 2016-ին` *տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:*

Գործառնության /ֆունկցիոնալ/ նախարարություններ

9. Տարածքային կառավարման` 2005-ից: Այնուհետև` *տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:*

10. Աշխատանքի և սոցիալական հարցերի` 2003-ից, 1996–2003 թթ.` սոցիալական ապահովության, 1995–1996 թթ.` սոցիալական ապահովության, զբաղվածության և բնակչության տեղաշարժի, 1990–1996 թթ.` աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն:

11. Արդարադատության

12. Արտակարգ իրավիճակների` 2008-ից, 2005–2008 թթ.` ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն, 1991–2005 թթ.` ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն:

13. Արտաքին գործերի

14. Էկոնոմիկայի նախարարություն` 2008-ից, 2002-2007 թթ.` առևտրի և տնտեսական զարգացման, 1997–2002 թթ.` արդյունաբերության և առևտրի, 1995–1997 թթ.` առևտրի, սպասարկումների և զբոսաշրջության, 1994 թ.` թեթև արդյունաբերության, 1991–1997 թթ.` արդյունաբերության, 1990–1995 թթ.` առևտրի նախարարություն:

15. Պաշտպանության նախարարություն

16. Սիլյուրքի նախարարություն` 2008–2018 թթ.:

17. Քաղաքաշինության նախարարություն. դարձել է կոմիտե` 1995-ից, 2000 թ.` տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող, 1991–1995 թթ.` շինարարության նախարարություն, 1990–1991 թթ. ճարտարապետության և քաղաքաշինության պետական վարչություն:

18. Ֆինանսների նախարարություն` 1991–1997 թթ. և 2008-ից, 1997–1999 թթ. և 1998–2008 թթ.` ֆինանսների և էկոնոմիկայի, 1991–1997 թթ.` էկոնոմիկայի նախարարություն:

Որպես գործադիր իշխանության գործառնության հատուկ կարգավիճակ ունեցող մարմին է հանդես գալիս ՀՀ կենտրոնական բանկը:

ՀՀ Կառավարության կառավարման նոր կազմակերպական կառուցվածքը վերջին հանրահայտ կառուցվածքային բարեփոխումների արդյունքում ստացել է հետևյալ տեսքը.

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի
2. Առողջապահության
3. Արդարադատության
4. Արտակարգ իրավիճակների
5. Արտաքին գործերի
6. Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության
7. Բնապահպանության
8. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
9. Պաշտպանության
10. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
11. Տնտեսական զարգացման և գյուղատնտեսության
12. Ֆինանսների:

Փաստորեն, լուծարվելու են ներքոհիշյալ նախարարությունները.

1. Գյուղատնտեսության
2. Էներգետիկայի և բնական պաշարների
3. Երիտասարդության հարցերի և սպորտի
4. Սփյուռքի
5. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
6. Քաղաքաշինության:

Ինչպես տեսնում ենք, գործադիր իշխանությունը բավականին բեռնաթափվել է, ինչը, բնականաբար, ողջունելի է, թեև քաղաքական, տնտեսական և այլ հարթակներից և զանգվածային լրատվամիջոցներից հնչեցին քննադատություններ այս առումով, մասնավորապես՝ քննադատողների մեծ մասը շեշտադրում էր գյուղատնտեսության նախարարության լուծարումը և մի քանի նախարարությունների վերամիավորումները, մասնավորապես՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի:

Քննադատությունների ալիքի առաջին հատվածի՝ գյուղատնտեսության նախարարության լուծարման առումով պետք է փաստել, որ կայացվել է ճիշտ որոշում: Մեր տնտեսական իրականության մեջ առ այսօր տարածված է այն կարծիքը, թե տնտեսության իրական հատվածի բոլոր ճյուղերն ու ոլորտները պետք է հանդես գան առանձին նախարարությունների ձևով: Դա, անկասկած, այդպես չէ: Տնտեսական զարգացման և գյուղատնտեսության նախարարությունը շատ ավելի արդյունավետ կիրականացնի իր գործառնությունները:

Ինչ վերաբերում է նախարարությունների վերամիավորումներին, ապա պետք է նշել, որ միջազգային տնտեսավարման պրակտիկայում սա բավականին տարածված և ընդունելի երևույթ է: Բերենք մի քանի օրինակ՝

- Արդյունաբերության, առևտրի և զբաղվածության նախարարություն (Իսրայել),
- Բնապահպանության, կայուն զարգացման, տրանսպորտի և բնակչի-նարարության նախարարություն (Ֆրանսիա),
- Մշակույթի, կրթության և սպորտի նախարարություն (Իսպանիա),

- Կրթության, մշակույթի, գիտության, սոցիալական ապահովության և սպորտի նախարարություն (Նիդեռլանդներ):

Պետական քաղաքականության հետագա զարգացման և իրագործման ոլորտում պետական կառավարման համակարգի դերն ու նշանակությունն ակնհայտ են: Ուսումնասիրելով աշխարհի մի շարք երկրներում գործառու-թային և կառուցվածքային բարեփոխումների շարժընթացը՝ աղյուսակի միջո-ցով ներկայացնենք բարեփոխումների ընթացքում իրականացված միջոցա-ռումները:

Աղյուսակ 1

Հանրային կառավարման գործառութային և կառուցվածքային բարեփոխումների ընթացքում իրականացված միջոցառումները՝ ըստ երկրների*

	Հայաստան	Ավստրալիա	Բրազիլիա	Մեծ Բրիտ.	Հունգարիա	Գերմանիա	Կանադա	Չինաստան	Լեհաստան	ՍՄՄ	Ֆինլանդիա	Չիլի	Հ. Կորեա
1. Գործառութային և կառուցվածքային /վարչական/ բարեփոխումներ													
Պետական ծախ-սերի կառավար-ման բարեփո-խումներ	+	+	+	+		+	+			+	+		
Պետական քա-ղաքացիական ծառայության բարեփոխումներ	+	+	+	+	+		+	+	+	+	+		+
Գործադիր իշ-խանության կա-ռավարման կազ-մակերպական կառուցվածքը	+	+		+			+	+	+		+	+	+
Պետական քա-ղաքականության իրագործման և հետագա զար-գացման ընդու-նակությունը		+		+	+	+	+	+	+	+	+	+	+
2. Բարեփոխումների իրականացման անբողջականությունն ու համակարգվածությունը													
Հպանցիկ բարեփոխումներ			+			+			+				
Հաջորդական համակարգված բարեփոխումներ	+	+		+	+		+	+		+	+	+	+

* Աղյուսակը կազմվել է՝ հիմք ընդունելով Համաշխարհային բանկի 2003 թ., 2008 թ., 2016 թ. պետական կառավարման բարեփոխումների ամփոփ հաշվետվությունները: World Bank. 2000-2016. Functional Reforms: A Contribution to the Policy Debate. Washington, D.C.: World Bank

Ներկա փուլում պետական կառավարման համակարգի գործառութային բարեփոխումների համատեքստում ՀՀ Կառավարության գործունեության

արդյունավետության մակարդակի բարձրացման առումով առանձնացնենք հետևյալ հիմնարար ուղղությունները.

*Պետության կողմից գործատուի գործառույթի
իրականացման լավարկում*

ՀՀ պետական կառավարման համակարգի գործառույթային բարեփոխումների առաջնային սոցիալական խնդիրներից մեկը պետական հատվածում զբաղվածության հետ կապված հարկաբյուջետային հիմնախնդիրների և իրազեկ, արհեստավարժ կադրերի հոսքն ապահովող կազմակերպական բնույթի միջոցառումների միջև հաշվեկշռվածության ապահովումն է: Մեկ անգամ ևս անհրաժեշտ է ընդգծել, որ ներկայումս պետական կառավարման համակարգի գործառույթային բարեփոխումների թերևս թիվ առաջին ցավոտ հիմնախնդիրը շարունակում է մնալ պետական կառավարման հատվածում փորձառու, հասուն կադրերի պակասը: Սերնդափոխության գործընթացը պետական կառավարման համակարգում անհրաժեշտ է իրականացնել աստիճանաբար, առանց ցնցումների: Պետական կառուցվածքային ստորաբաժանումների միաժամանակյա, այսպես կոչված, «երիտասարդացումը» և մինչև 40–45 տարեկան կադրերով ապահովվածությունը ճակատագրական սխալ որոշում է՝ հղի բացասական, անկանխատեսելի հետևանքներով: Միաժամանակ, մեր կարծիքով, սխալ է և չհիմնավորված պետական կառավարման գրեթե բոլոր պատասխանատու օղակներում կադրերի ներգրավումը բացառապես կուսակցական պատկանելության սկզբունքով: Նախորդ իշխանության արհեստավարժ կադրերի մի հսկայական զանգված այսօր համալրել է գործազուրկների բանակը, այնինչ անհրաժեշտ և պարտադիր պայման էր այդ կադրերի գործնական գիտելիքների ու հմտությունների ըստ ամենայնի օգտագործումը պետական կառավարման տարբեր հատվածներում, ինչը հաստատապես կբարձրացներ կառավարության գործունեության արդյունավետության աստիճանը, իսկ ՀՀ գործադիր իշխանության կառավարման կազմակերպական կառուցվածքի օպտիմալացումը չէր պահանջի այսքան երկար ժամանակ:

*Նյութական շահադրդվածության սկզբունքի արմատավորումը
պետական կառավարման համակարգում*

Նյութական, իսկ առանձին դեպքերում նաև ոչ նյութական խթանների արդյունավետության հիմնախնդիրը շարունակում է մնալ օրակարգային և հրատապ լուծում պահանջող հարց: Անհերքելի է այն փաստը, որ պետական կառավարման համակարգի աշխատակիցների աշխատավարձը պետք է լինի բավականաչափ մրցունակ՝ բարձր արհեստավարժությամբ օժտված կադրերի ընտրության, աշխատանքի տեղավորման և նյութական խրախուսման տեսանկյունից: Խոսքը, նախևառաջ, պետական և մասնավոր հատվածներում համանման աշխատանք կատարող անձանց աշխատավարձերի էական ճեղքվածքի մասին է, որն անհրաժեշտ է հաղթահարել:

ՀՀ պետական հատվածի գործառույթային բարեփոխումների արդյունքում բացահայտվեց, որ գործունեության որոշ նեղ մասնագիտացված ոլորտներում նկատվում է բարձրորակ կադրերի պակաս: Պարզագույն օրինակ. ՀՀ պետական բուհերում երիտասարդ գիտնականների միայն փոքր մասն է հիմնական աշխատող՝ պայմանավորված ցածր աշխատավարձով: Հետևապես՝ ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պարագայում ան-

հրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ, ինչը թույլ կտա պետությանը երկրի ներսում հավաքագրել, նյութապես շահադրդել բարձրորակ և արհեստավարժ կադրերի՝ մասնավոր հատվածի և հանրապետությունում աշխատող օտարերկրյա (միջազգային) կազմակերպությունների նկատմամբ բացառիկ մրցակցության դեպքում:

Նոր իշխանությունների նկատմամբ բնակչության և մասնավոր հատվածի վստահության ամրապնդումը որակյալ ծառայությունների մատուցման ճանապարհով

Պակաս կարևոր նշանակություն չունի (եթե չասենք՝ բացառիկ կարևոր նշանակություն ունի) բնակչության և մասնավոր տնտեսավարող սուբյեկտների վստահության ամրապնդումը պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ: Ակնհայտ է, որ կառավարության գործունեության արդյունավետության նկատմամբ զանգվածային անվստահության մթնոլորտի դրսևորումը հաճախ ավարտվում է հեղափոխությամբ և իշխանափոխությամբ: Վերջին տարիներին OECD տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպության կողմից աշխարհի 18 տնտեսապես առաջատար և զարգացող պետություններում կատարված հետազոտությունների արդյունքում բացահայտվեց պետական իշխանության մարմինների նկատմամբ հասարակության աճող անվստահության բացասական միտում²:

Կատարված վերլուծությունների արդյունքում բացահայտվեց, որ հասարակության և տնտեսության մասնավոր հատվածի վստահության աստիճանը պետական ծառայողների նկատմամբ ավելի բարձր է, քան քաղաքական գործիչների: Սակայն սա էլ է քիչ հուսադրող, քանզի, ընդհանուր առմամբ, պետական կառավարման համակարգի նկատմամբ դրսևորվող բացասական միտումները շարունակում են նոր թափ ստանալ՝ անկախ տվյալ երկրի զարգացման ընդհանուր մակարդակից:

Մեր խորին համոզմամբ պետական իշխանության մարմինների նկատմամբ անվստահության դրսևորման կարևորագույն պատճառը կոռուպցիայի աճող ծավալներն են: Թեև ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015–2018 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2015 թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշման համաձայն սահմանվել էին կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հիմնական միջոցները մասնակցային կառավարման համակարգի ձևավորման և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության, ինչպես նաև կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանման և արդյունավետ քննության ճանապարհով, այդուհանդերձ, կոռուպցիայի ծավալները շարունակում էին աճել: Նորաստեղծ կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի հասարակության լայն խավերի վստահության ամրապնդումը նախևառաջ հակակոռուպցիոն կազմակերպական բնույթի լայնածավալ միջոցառումների իրականացման շնորհիվ:

² Տե՛ս https://www.oecd-ilibrary.org/governance/institutions-of-intergovernmental-fiscal-relations/what-makes-a-local-government-reform-successful-the-finnish-experience_9789264246966-11-en

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր /հավելված ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի թիվ 442-Ն որոշման/:
2. Zaleski P., Tocqueville on Civil Society: A Romantic Vision of the Dichotomic Structure of Social Reality. Archiv fur Begriffsgeschichte, Bd., 2008.
3. Almond G., Verba S., The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, Princeton University Press, 1989.
4. London School of Economics and Political Science, Centre for Civil Society, „Definition of Civil Society”.
5. Rose M., Democratizing information by implementing e-government in Indonesian regional government; The International Information & Library Review, 2004.
6. Devadoss P.R., Pan Sh.L., Huang J.C., Struktural Analysis of e-government initiatives: case study of SCO; Decision Support Systems, 34, 2002.
7. Sharifi H., Zarei B., An adaptive approach to implementing government in I.R. Iran, Journal of Government Information 30, 2004.
8. Jaeger P.T., Beyond Section 508; The spectrum of legal requirements for accessible e-government Web sites in the United States; Journal of Government Information 30 (2004).
9. Thomas Hobbs, Leviathan, New York, W.W. Norton and Co., 1997.
10. World Press Freedom Index: Dashed Hopes after Spring. 2017. <https://rsf.org/en/ranking>
11. Freedom of the Press 2017: Middle East Volatility amid Global Decline. https://freedomhouse.org/sites/default/files/FOTP_2017_booklet_FINAL_April28.pdf
12. Koh Ch.E., Prybutok V.R., Zhang X., Measuring e-government Readiness, Information & Management, 45, 2008.
13. Fiscal Decentralization in Developing and Transition Economies: Progress, Problems and the Promise by Anwar Shah, World Bank Policy Research Working Paper 3282, Washington D.C., April, 2004.
14. Consolidation or Fragmentation? The Size of Local Governments in Central and Eastern Europe. Edited by Pawel Swianiewich, Budapest, 2002.
15. CoSign Version 4.4 User Guide, Algorithmic Research, Ltd., 2008.
16. Relly J.E., Sabharwal M., Perceptions of transparency of government policymaking: A cross-national study; Government Information Quarterly, 26, 2009.
17. Raus M., Liu J., Kipp A., Evaluating IT innovations in a business-to-government context: A framework and its applications; Government Information Quarterly, 27, 2010.
18. Joia L.A., Developing Govenment-to-Government enterprises in Brazil: a heuristic model drawn from multiple case studies; International Journal of Information Management, 24, 2004.
19. Zarei B., Ghapanchi A., Guidelines for government-to-government initiative architecture in developing countries; International Journal of Information Management, 28, 2008.
20. Kim S., Kim J., Lee, An institutional analysis of an e-government system for anti-corruption: The case of OPEN; Government Information Quarterly, 26, 2009.
21. E-Government in new developing countries. Abstract. S. Bessinger. Ohayo Technological University.
22. Practical Reverse Engineering: x86, x64, ARM, Windows Kernel, Reversing Tools, and Obfuscation, Bruce Dang, 2014.

СЕДРАК АРУТЮНЯН

Аспирант Академии государственного управления РА

Направления оптимизации управленческой организационной структуры и повышения эффективности деятельности правительства РА.

– Реформы системы государственного управления не являются самоцелью. Учитывая огромные сложности преодоления противостояния сторон в процессе управления изменениями, становится ясным, что на уровне государственного управления осуществление функциональных реформ полно непредсказуемых последствий, обусловленных вероятностью как экономико-политических и социальных потрясений, так и коренных изменений управленческой организационной структуры исполнительной власти и изменений количества и соотношения отраслевых и функциональных министерств, входящих в ее состав.

В преддверии 21-го века в разных странах мира были осуществлены широкомасштабные и комплексные программы по реформированию государственного управления, направленные на повышение эффективности деятельности исполнительной власти. Часть реформ носила коренной характер (управленческая организационная структура правительства была подвергнута значительным изменениям, коренным образом были изменены системы и методы управления, что привело к появлению термина "новое государственное управление").

Ключевые слова: *организационная структура управления, функциональные реформы, государственные расходы, отраслевые и функциональные министерства.*

JEL: M1, M38, H11

SEDRAK HARUTYUNYAN

Post-graduate at the Public Administration Academy of the RA

Directions for Optimizing the Managerial Organizational Structure and Increasing the Effectiveness of the Activities of the RA Government.

– Reforming the public administration is not an end in itself. Given the enormous difficulties of overcoming the opposition of the parties in the management of changes, it becomes clear that on the government level the implementation of functional reforms is full of unpredictable consequences, caused by the likelihood of economic, political and social shocks, as well as fundamental changes in the executive management structure correlation of sectorial and functional ministries included in its composition.

On the eve of the 21st century, large-scale and comprehensive programs of reforming public administration were implemented around the world with the aim of at increasing the efficiency of the executive branch. A part of the reforms was fundamental (the management organizational structure of the government was subject to significant changes, management methods, which led to the emergence of the term "new public administration").

Key words: *organizational structure of management, functional reforms, government expenses, sectoral and functional ministries.*

JEL: M1, M38, H11